Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ներառական կրթությունը և արդի դժվարությունները

Ուսուցչուհի՝ Սեդա Գրիգորյան

Խմբի ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

1. Ներառական կրթությունը Հայաստանում ---------- 5
2. Ներառական կրթության հիմնական սկզբունքները ---------- 9
3. Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում ---------- 11
4. Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին ---------- 15
5. Անհատական ուսուցման պլան ---------- 17
6. ԱՈՒՊ-ի օրինակելի ձևի բաղադրիչները ---------- 19
7. Դերը և պարտականությունները ԱՈՒՊ-ում ---------- 20
8. Տարրական դպրոցն ավարտելիս սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջները ----------22
9. Գնահատում ----------23
10. Հիվանդություններ ----------24
11. Ներառական կրթության արդի դժվարությունները ----------25

Հապավումների ցանկ----------27

Եզրակացություն ----------28

Գրականություն ----------30

Ներածություն

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում է երեխան

Ներառական կրթություն (ֆրանս. Inclusif –ներփակված, լատ.include-ներառված), կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը : Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

2000թ.-ից ի վեր ներառական կրթությունը (ՆԿ), որպես կրթական բարեփոխումների մի մաս, հանդիսանում է ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը: ՀՀ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձնանց կրթության մասին օրենքն ընդունվեց 2005թ.-ին, որից հետո ՆԿ-ը ընդգրկվեց կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքի ընդունումից 7 տարի անց ՀՀ Ազգային ժողովը հաստատեց հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, որի համաձայն ՆԿ մասին օրենքը դառնալու է հանրակրթության օրենքի մի մասը՝ ըստ այդմ հանրակրթական համակարգը նախապատրաստելով համընդհանուր ներառականության, որը պլանավորված է

կյանքի կոչել մինչև 2022թ: Նման զարգացումների ներքո հատկապես արդիական է դառնում ՀՀ-ում ՆԿ իրականացման համալիր ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա բացահայտել ոլորտի ձեռքբերումները, հիմնական խնդիրները և գնահատել համընդհանուր ներառականությանը անցում կատարելու ՀՀ հանրակրթության համակարգի պատրաստվածության աստիճանը:

Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթականդպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (**ԿԱՊԿՈՒ**) անձանց: Ներառական կրթությունը մշակվում է ավելի ճկուն մոտեցմամբ, որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին, և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան: Հայաստանը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

1. Ներառական կրթությունը Հայաստանում

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք։ Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար։ Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, որն ընդունվել է 1999 թվականին, «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»։ Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով։ Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր։ 2001 թվականից «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներն իրականացնում են ներառական կրթություն։ ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա 2000 թ. Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան 27-րդ միջնակարգ դպրոցում մեկնարկեց ներառական կրթության փորձնական ծրագիրը, իսկ 2001-2005 թթ. ընթացքում ներառական կրթություն իրականացվել է փորձնական կարգով 5 հանրակրթական դպրոցում։ 2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը։ Խորհրդային հասարակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հիմնականում կազմակերպվում էր գիշերօթիկ

դպրոցներում: Հայաստանի կողմից ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային միանալուց հետո սկսվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը հանրապետությունում: Հանրակրթական համակարգին զուգընթաց հանրապետությունում ընթացել են նաև հատուկ կրթության (գիշերօթիկ դպրոցների) համակարգի բարեփոխումներ: Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա՝ կրթության մատչելիություն և որակ: Հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց: Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»: 2007 թվականից սկսած ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը: **Այսօր Հայաստանի Հանրապետությունում 117 հանրակրթական դպրոցներ իրականացնում են ներառական կրթություն, այնտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:**

Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը: 2002 թ. հանրապետությունում գործում էին 52 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում

էր շուրջ 10.000 երեխա։ Այսօր հանրապետությունում գործում են 23 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում է շուրջ 2300 սովորող։ Ե՛վ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, և՛ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը։ Դա հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային պարտադրաբար ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և նրան ներառելով հանրակրթական ուսումնական հաստատություն։ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման։

Այս իմաստով հատուկ հանրակրթական համակարգում ընթացող բարեփոխումներն առաջնահերթ են։ 2007 թ. ստեղծվել է **Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը**։ Այս կառույցի ստեղծման հիմնական նպատակն էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների բացահայտումը և նրանց դուրսբերումը հատուկ դպրոցներից, որը հաջողությամբ իրականացվեց։ Անցած 5 տարիների ընթացքում գնահատման արդյունքների հիման վրա հատուկ դպրոցների 1-6-րդ դասարաններից դուրս են բերվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները, և կանխվել է նման երեխաների մուտքը հատուկ

դպրոցներ։ Զարգացումները գնահատման կենտրոնի առաջ դրեցին նոր մարտահրավերներ, այն է՝ երեխայի կրթական կարիքների գնահատում՝ արդյունավետ կրթության կազմակերպման նպատակով։ Անհրաժեշտ է մշակել նոր չափանիշներ՝ հիմնված երեխայի ֆունկցիոնալ կարիքների վրա։ Այդ պարագայում երեխայի անհատական ուսումնական պլաններն էլ կմշակվեն երեխայի իրական կրթական կարիքների գնահատման արդյունքում և կնպաստեն երեխայի զարգացմանը։ Հաշմանդամության գնահատման այդպիսի միասնական մոդել է առաջարկում մշակել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ։ Մոդելի մշակման համար ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ։ Այսօր, համաձայն վիճակագրության, *Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ*, իսկ հատուկ դպրոցներում՝ հատուկ հանրակրթական դպրոցներում՝ շուրջ 2300 երեխա։ Փաստորեն, հանրապետության շուրջ 8000 հաշմանդամություն ունեցող երեխաներից ՀՀ ԿԳՆ տեսադաշտում են շուրջ 5000-ը։ Սակայն չունենք հստակ վիճակագրական տվյալներ, թե ճանաչված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից քանի՞սն են ճանաչված հաշմանդամություն ունեցող երեխաներ։ Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կատարված «Խոսքը ներառման մասին է» (Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում) հետազոտության՝ հանրապետության հաշմանդամություն ունեցող երեխաների 75%-ը սովորում է հանրակրթական դպրոցներում։ Համաձայն ՀՀ կառավարության 25.08.2005 թ. N1365-Ն որոշման՝ հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ֆինանսավորվում է բարձրացված չափաքանակով։ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439 որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար։ Ըստ այդ փաստաթղթի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը

հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին: 2011 թվականից ՀՀ կառավարության հունվարի 27-ի N 46-Ն որոշմամբ «Հույսի կամուրջ» ՀԿ-ի և դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության հետ համատեղ Տավուշի մարզում իրականացվում է հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման ծրագիր, և ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը:

ՀՀ Ազգային ժողովը 2012 թ. հոկտեմբերին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալական խարտիայի» պահանջներով, որոնց միանալով Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն միջազգային պարտավորություններով, այլև Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրով սահմանված ներառական կրթության ընդլայնման, հատուկ դպրոցների օպտիմալացման, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրման միտումով: Արդյունքում կունենանք երեխայի անհատական տարբերություններից ու հաշմանդամությունից անկախ՝ կրթության իրավունքի միասնական իրավական կարգավորում, որը կերաշխավորի բոլորի համար կրթության հավասարության իրավունքը:

2. Ներառական կրթության հիմնական սկզբունքները

Բժշկական մոդել

Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հաշմանդամությունը համարվել է և համարվում է անձի խնդիրը, որը նշանակում է, որ հաշմանդամությունը «հիվանդություն» է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է, և, հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը: Այսինքն՝ եթե կենտրոնանանք միայն առողջական խնդիրների վրա և հաշմանդամություն ունեցող մարդուն դիտարկենք առաջին հերթին որպես հիվանդի, ապա նրա վիճակի բարելավմանն ուղղված գործողությունները կկրեն հիմնականում բժշկական և բարեգործական բնույթ (ֆիզիկական վերականգնում, բուժում, բարեգործական օգնություն): Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դառնում է «հիվանդ», «խնամյալ»: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները (խնամողը, ընտանիքը, հասարակությունը): Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա հիվանդ է և ունի հիմնականում բուժման, խնամքի և հոգածության կարիք: Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում է նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին Այսպիսով բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը, հատուկ խնամքին և աջակցությանը:

Սոցիալական մոդել

Չբացառելով հաշմանդամության բժշկական մոդելի կարևորությունը՝ հաշմանդամության սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է

որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք։ Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել հավասար հնարավորություններ և լիարժեք մասնակցություն հասարակության բոլոր քաղաքացիների համար։ Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին և ներուժին։ Ավելին, այս մոդելը կոչ է անում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի զարգացման գործընթացներին։ Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առաջնային և կարևոր մասնակցություն ունենան իրենց խնդիրների լուծմանն ուղղված օրենքների, քաղաքականությունների, ռազմավարությունների և գործընթացների մշակմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը։ Սոցիալական մոտեցման դեպքում հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակը բարելավելու գործողություններն ուղղված են այն բանին, որպեսզի վերացվեն բոլոր ներքին ու արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության կյանքին նրանց ներգրավմանը։ Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք։ Այսպիսով, սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային և վերաբերմունքի, արգելքների/խոչընդոտների փոխազդեցության հետևանք։ Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացմանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը։

Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը կազմում է ներառական կրթության առանցքը, քանի որ այն ենթադրում է՝ բոլոր երեխաների կրթական կարիքների հավասար գնահատում. դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին բոլոր երեխաների ներգրավվածության աստիճանի բարձրացում. կրթական քաղաքականության վերանայում և

համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին. ուսումնական գործընթացներում առկա խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում. երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում.սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և հարգանք. դպրոցական պայմանների բարելավում. հասարակության ժողովրդավարական և մարդասիրական արժեհամակարգի ձևավորման գործում դպրոցների դերի կարևորում.կրթությունը որպես հասարակության մեջ բոլոր մարդկանց լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում։

3. Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում

- Թե ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:
- Կարևորն այն է, որ ախտորոշումը, որն ընդգծում էր աշակերտի թերությունները, այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:
- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ: Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ:

Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և

հավասարություն։ Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում։ Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է։

4. Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին

- Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան: Սկզբունքորեն այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում և պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պատասխանատվության տակ է:
- Ցավոք, բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից: Հատուկ դպրոցները չեն կարող այս հարցի լուծում հանդիսանալ: Շատ փոքր է այն երեխաների թիվը, որոնց կարելի է առաջարկել, որ սովորեն հատուկ դպրոցներում: Հատուկ դպրոցները չեն կարող առանձնացված ծառայություններ լինել, դրանք պետք է շատ ակտիվ դերակատարություն ունենան դպրոցների զարգացման գործընթացում՝ որպես հանրակրթական դպրոցներին աջակցություն մատուցող ծառայությունների կենտրոններ:
- Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:
- Հատուկ և հանրակրթական դպրոցների միջև առկա պատնեշը տարիների ընթացքում աստիճանաբար կկորցնի իր արդիականությունը դպրոցական համակարգի համար, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կստանձնի իր կարևոր դերը բոլոր երեխաներին անհրաժեշտ ծառայություններ մատուցելու նպատակով: Մասնագիտական տեսանկյունից դա կապահովի դասավանդման որակի բարելավում, երբ տարբեր բնագավառների մանկավարժների փորձառությունն ու մոտեցումները հնարավոր կլինի ինտեգրել:
- Աշակերտի և նրա կրթության համար արդեն պատասխանատվություն կկրի հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Ռեսուրս-ուսուցիչների առկայությունը չի

ենթադրի, որ նրանք կարող են ստանձնել այդ պարտականությունը հանրակրթական դպրոցի ուսուցչի փոխարեն:

- Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատու կլինի, որ դպրոցի ծրագրերն ու դպրոցը մատչելի լինեն բոլոր երեխաների համար, հաշվի առնեն երեխաների կարիքները, պարբերաբար վերամշակվեն, իրականանան և գնահատվեն: Նման ծրագրերի և դրանց գնահատման արդյունքները կխթանեն դասավանդման նոր մոտեցումներ և ծրագրեր: Այն փաստը, որ ուսուցիչները համատեղ ուժերով, համատեղ քննարկմամբ կառաջարկեն մեթոդներ ու լուծումներ դասավանդման կոնկրետ խնդրի հաղթահարման, կոնկրետ աշակերտի կարիքներին համապատասխան ուսուցումը կազմակերպելու համար, կարևոր մաս կկազմի դասավանդման որակը բարելավելու գործընթացում:
- Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում, ընտանիքի մասնակցությունը համարվում է անփոխարինելի պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքի անդամները կարող են կարևոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն և հավատ ներշնչվի, և ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու և ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում:
- Ամբողջ կրթության նպատակը պետք է ուղղված լինի անհատի կարիքներին, և շատ կարևոր է, որպեսզի գնահատման ռազմավարությունը մշակված լինի առաջընթացի գնահատումը խթանելու նպատակով: Գնահատումը պետք է ուղղված լինի դրական զարգացումները բացահայտելուն:

5. Անհատական ուսուցման պլան

ԱՈՒՊ

ԱՈՒՊ-ը լրացվում է դպրոցի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սահմանված կարգով գնահատված կրթության ազանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար:

ԱՈՒՊ հապավումը նշանակում է .անհատական ուսուցման պլան: Անհատական ուսուցման պլանը լրացվում է դպրոցի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սահմանված կարգով գնահատված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար: Սովորողի համար անհատական ծրագրերով ուսուցման կազմակերպման վերաբերյալ որոշում է կայացնում դպրոցի մանկավարժական խորհուրդը՝ հիմք ընդունելով ԱՈՒՊ-ով տվյալ աշակերտի կրթությունը կազմակերպելու նրա ծնողի դիմումը և ուսուցիչների ու մանկավարժահոգեբանական աջակցության մասնագիտական խմբի համատեղ եզրակացությունը՝ հիմնված երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման բոլոր փուլերում հավաքված տեղեկատվության վերլուծության վրա: ԱՈՒՊ-ի մշակման հենքը կազմում է ԱՈՒՊ-ի վերաբերյալ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) տրված սահմանումը:

ԱՈՒՊ-ը գրավոր ուսումնական համագործակցային (թիմային) պլանավորում է, որը կառուցվում է աշակերտի կարիքներից, ուժեղ կողմերից և հետաքրքրություններից բխող՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ուսումնական բնագավառների համար, ըստ հանրակրթության աստիճանների, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների հենքի վրա: Ուսումնական բնագավառները ներկայացնող առարկաների համար մշակված ծրագրերի բովանդակության հարմարեցումների հիման վրա էլ մշակվում է յուրաքանչյուր, այդ թվում՝ **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատականացված ծրագրային բաղադրիչների ուսուցման պլանավորումները** յուրաքանչյուր առարկայի համար: Այս մշակումները հիմնված են հանրակրթական պետական կամ այլընտրանքային ծրագրերի (առարկայի դասավանդման դասարանի(ների) դասավանդման հաջորդականության և ծրագրային նյութերի ծավալների՝ ըստ դասարանների բաշխվածության հաշվառման վրա:

Հանրակրթական պետական կամ այլընտրանքային առարկայական ծրագրերի հիման վրա սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա անհատական պլանները (ԱՈՒՊ) կարող են տարբերվել «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված ստորև նշված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջներից և այդ բովանդակային նվազագույն պահանջները՝ ըստ բնագավառները ներկայացնող առարկաների ծրագրային նյութի ծավալներից: ԱՈՒՊ-ում հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը կարող են պարզեցվել և հարմարեցվել աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին:

«Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված՝ ըստ հանրակրթության աստիճանների, կրթության բովանդակության նվազագույն պահանջները ուսուցչի համար բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման համար ելակետային դրույթներ են, որոնք ԱՈՒՊ կազմելիս կարող են դառնալ երեխայի կրթության կարճաժամկետ (1-2 շաբաթ) և երկարաժամկետ (մինչև 2 ամիս) բովանդակության և դրա իրականացման մանկավարժամեթոդական գործողությունների պլանավորման ելակետ:

6. ԱՈՒՊ-ի օրինակելի ձևը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

- աշակերտի անձնական տվյալները.
- աշակերտի մասին ընդհանուր ճանաչողական տեղեկատվություն, այդ թվում՝
  - *ներառյալ այն ուսումնական բնագավառները, որտեղ դրսևորվում են նրա ուժեղ կողմերը.*
  - *աշակերտի մոտ առկա դժվարությունները.*
  - *ֆունկցիաների (ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ/մտավոր), շարժողական) կատարման մակարդակները՝ ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկության.*
  - *առողջական վիճակի մասին բժշկական անհրաժեշտ տեղեկություն.*
  - *լրացուցիչ այլ տվյալներ, այդ թվում՝*
- կրթության վերջնարդյունքները ըստ ուսումնական առարկայի հարմարեցված ծրագրի բովանդակային բաղադրիչների յուրացման վերջնարդյունքների.
- զարգացման ենթակա ուսումնական բնագավառները և թիրախային հմտությունները.
- աշակերտի տարեկան վերջնարդյունքները (նպատակները)՝ ըստ առարկայական ծրագրերի (այս նպատակներին պետք է հասնել տվյալ ուսումնական տարվա ընթացքում)՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուսուցանվող թեմայի ավարտին: Նպատակների թիվը կարող է ավելի շատ լինել, քան նախատեսված են դասարանի մյուս աշակերտների համար, ում ուսուցումը ԱՈՒՊ-ով չի իրականացվում.
- կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումներ (խնդիրներ)՝ ըստ առարկայական ծրագրերի տարեկան վերջնարդյունքների.
- կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումների (խնդիրների) իրականացումն ըստ առարկայական ծրագրերի.
  - անհատական թեմատիկ պլանավորումներ.
  - դասավանդման ռազմավարություններ (տվյալ առարկայի նպատակադրման հետ կապված ծրագրի բովան-

7. Դերը և պարտականությունները ԱՈՒՊ_ում

Դպրոցի տնօրենը, դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը, տվյալ ուսուցիչը, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական աշխատողը , ուսուցչի օգնականը,աշակերտի ծնողը և սովորողը:

Տվյալ սովորողի որոշումը ընդունելուց հետո սկսվում է պլանավորման գործընթացը 4 փուլերով:



1-ին փուլի ավարտին



2-րդ փուլի ավարտին



3-րդ փուլի ավարտին



8. Տարրական դպրոցն ավարտելիս սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջները

- ունենա ինքնուրույն սովորելու կարողություններ՝
  - ✓ ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել,
  - ✓ ճիշտ գնահատել իր հնարավորությունները,
  - ✓ տիրապետել սովորելու հիմնական հմտություններին, ունենալ սովորելու կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ,
  - ✓ դրսևորել աշխարհաճանաչողության գործուն և առողջ հետաքրքրասիրություն.
- ունենա հասարակական և քաղաքացիական կարողություններ՝
  - ✓ գիտակցի և արժևորի իր ազգային ինքնությունը,
  - ✓ հարգի և ընդունի ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները,
  - ✓ ունենա օբյեկտիվ ինքնագնահատական,
  - ✓ ցուցաբերի հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զսպված վարք,
  - ✓ ճանաչի և արժևորի իր հայրենիքը, Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները,
  - ✓ իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինի իր արարքների համար,
  - ✓ գիտակցի իր պատկանելությունը համայնքին.
- ունենա տարրական կենցաղային, աշխատանքային հմտություններ, լինի նախաձեռնող և գործունյա՝
  - ✓ կարողանա աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ,
  - ✓ կարողանա պլանավորել անձնական գործերը և իրականացնել դրանք,
  - ✓ լինի նախաձեռնող,
  - ✓ կատարի գնումներ.
- ունենա գեղագիտական ընկալում և ստեղծագործական տարրական կարողություններ՝
  - ✓ զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ՝ նկարել, ծեփակերտել, երգել, նվագել, հանդես գալ բեմադրություններում,
  - ✓ նկարչական միջոցներով, երևակայական պատկերներով արտահայտի գաղափարներ,

9. Գնահատում

Գնահատումը իրականացվում է ընթացիկ ,կիսամյակային, տարեկան ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Ընդհանրապես ուսուցչի կողմից դասին հանգամանորեն նախապատրաստվելը արդյունավետ դասավանդման կարևոր նախապայմաններից մեկն է: Յուրաքանչյուր ուսուցիչ շատ լավ գիտի, թե ինչպես է պլանավորվում դասը, որն իր պաշտոնի հիմնական պարտականություններից է: Նա յուրաքանչյուր դասի համար նախօրոք պետք է մշակի դաս-պլանը: Հաճախ է քննարկվում այն անհանգստությունը, որ ուսուցիչների համար դասի պլանավորումը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է, երբ դասարանում կա ԱՈՒՊ-ով սովորող երեխա, քանի որ ուսուցիչը մի կողմից պետք է պլանավորի և իրականացնի ընդհանուր դասարանի համար մշակված դասի պլանը և դրա հետ մեկտեղ՝ առանձին էլ պետք է պլանավորի և իրականացնի ԱՈՒՊ-ով սովորողի դասի պլան: Նման անհանգստությունները անհիմն են, քանի որ ուսուցիչը ոչ թե պետք է երկու առանձին դաս-պլան մշակի, այլ իր մշակած դաս-պլանում պետք է նաև հաշվի առնի դասարանում սովորող այն աշակերտներին, որոնց համար առաջադրանքները պետք է առավել անհատականացված և պարզեցված տրվեն ու կիրառվեն դասավանդման առավել ճկուն մեթոդներ: Այս ամենի մասին նախօրոք հոգալը ուսուցչին հավելյալ վստահություն կհաղորդի, կօգնի դասի սահուն ընթացքին և ժամանակն արդյունավետ տնօրինելուն:

Ուսուցիչը իր առարկայի ամենօրյա դաս-պլանավորման ժամանակ, ինչպես դասարանի մյուս աշակերտների, այնպես էլ իր ԱՈՒՊ-ով սովորող երեխայի համար որոշում է դասավանդման ռազմավարությունները: Դասավանդող ուսուցիչներն ԱՈՒՊ-ի իրականացման այս փուլի գլխավոր դերակատարներն են և առաջնային պատասխանատվություն են կրում այդ սովորողի ուսումնառության կազմակերպման համար: Ուսուցիչը պետք է ապահովի, որ դասապրոցեսն ընդհանուր լինի բոլոր աշակերտների համար, որ ԱՈՒՊ ունեցող երեխային տրված առաջադրանքները լինեն նույն բովանդակության, բխեն նույն թեմայից, ինչ դասարանի մյուս աշակերտների համար, սակայն դրանք պետք է լինեն պարզեցված և հարմարեցված ԱՈՒՊ-ով սովորող երեխայի ունակություններին: Որքան շատ է ուսուցիչը տարբերակված և երեխայակենտրոն դասավանդման մեթոդներ կիրառում ամբողջ դասարանի համար, այնքան ավելի հեշտ է լինում տրամաբանական կապեր ստեղծել ԱՈՒՊ-ով անհատականացված ծրագրի և դասարանի համար նախատեսված ընդհանուր ծրագրի միջև: Վերջինը խթանում է դասարանում ստեղծել ուսուցման և ուսումնառության միասնական ներառական միջավայր, որտեղ ԱՈՒՊ-ով սովորող աշակերտներն իրենց դասարանի մաս են զգում, այլ ոչ թե իրենց ուսուցումն իրականացվում է այլ, բովանդակային առումով տարբեր ծրագրով, որը նրանց մեկուսացնում է համադասարանցիներից:

10. Հիվանդությունները

Ուշադրության դեֆիցիտ,աուտիզմ,կուրություն, մանկական ուղեղային կաթված, հուզական ոլորտի խանգարումներ, սովորելու և գիտելիքը կիրառելու համար դժվարություններ, դիսլեքսիա:

11. Ներառական կրթության արդի դժվարությունները

Հաշվետվության ի՞նչ մեխանիզմներ են գործում հիմնավորելու համար, որ բյուջետային հատկացումները ծախսվել են հաշմանդամ երեխաների համար: Ինչպիսի՞ն կլինի դպրոցներին տրվող բյուջետային հատկացումների հեռանկարը այն դեպքում, եթե ընդհանուր ներառվածությունն ընդունվի և իրագործվի: - Ներկայումս ներառական կրթությանն ուղղված ինչպիսի՞ ծրագրեր են մշակվում կամ նախատեսվում սկսել: Ովքե՞ր են իրականացնում այդ ծրագրերը, որո՞նք են այդ ծրագրերի հիմնական թիրախները/նպատակները: Որքանո՞վ են նրանք գործունակ և պրակտիկ: Որքանո՞վ են այդ ծրագրերը համատեղելի պետական ՆԿ ծրագրի հետ: Ինչպե՞ս են այդ ծրագրերը լրացնում/հակասում/համընկնում ՆԿ պետական գաղափարի հետ: 2. Ներառական դպրոցներ՝ առկա իրավիճակ, ընկալումներ, խնդիրներ, ակնկալիքներ - Որո՞նք են ներառական դպրոցների ֆիզիկական կարողությունները (թեքահարթակների թիվ, հատուկ կահավորված սենյակներ, զուգարաններ և այլն): Արդյո՞ք այս կարողությունները համապատասխանում են տվյալ դաշտը կանոնակարգող փաստաթղթում նշված պահանջներին: Արդյո՞ք այս կարողությունները բավարար են հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջները բավարարելու համար: Որքանո՞վ են հաշվետու ներառական դպրոցները և համայնքները բավարար ֆիզիկական կարողություններ ապահովելու համար: Ո՞ր պետական և հասարակական կազմակերպություններն են զարգացնում այս կարողությունները: Ի՞նչ որակ ունի արդեն տրամադրված աջակցությունը: 16 - Որո՞նք են ներառական դպրոցների տեխնիկական կարողությունները (զարգացնող խաղալիքներ, հատուկ կրթական նյութեր և այլն): Արդյո՞ք այս կարողությունները համապատասխանում են տվյալ դաշտը կանոնակարգող փաստաթղթում նշված պահանջներին: Արդյո՞ք այս կարողությունները բավարար են հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջները բավարարելու համար: Որքանո՞վ են հաշվետու ներառական դպրոցները և համայնքները բավարար ֆիզիկական կարողություններ ապահովելու համար: Ո՞ր պետական և հասարակական կազմակերպություններն են զարգացնում այս կարողությունները: Ի՞նչ որակ ունի արդեն տրամադրված աջակցությունը: - Որո՞նք են ներառական դպրոցների մարդկային ռեսուրսները:

Արդյո՞ք նրանք ունեն հոգեբաններ և սոցիալական աշխատողներ: Արդյո՞ք նրանց կրթական և մասնագիտական փորձը համապատասխանում է տվյալ դաշտը կանոնակարգող փաստաթղթում նշված պահանջներին և հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին: Ինչ դասընթացների են մասնակցել ներառական դպրոցների ուսուցիչները: Ովքե՞ր են մշակել մոդուլներ և ովքե՞ր են եղել թրեյներները: Ինչպե՞ս են մշակվել թրեյնինգների մոդուլները: Որքանո՞վ են այդ մոդուլները համապատասխանում ուսուցիչների կարիքներին և ակնկալիքներին: Որքանո՞վ են թրեյնինգի մոդուլները ներառում տարբեր հաշմանդամություն ունեցող երեխաներին դասավանդելու հմտություններ և ապահովում որակյալ կրթություն: Որքանո՞վ են վերապատրաստված ուսուցիչները բավարարված թրեյնինգներով: Ինչպե՞ս են թրեյնինգների արդյունքները օգտագործվում պրակտիկայում: - Ի՞նչ հմտություններ ունեն ներառական դպրոցների ուսուցիչները անհատական ուսումնական պլան (ԱՈՒՊ) մշակելու համար: Ի՞նչ տեսակի մեթոդաբանական աջակցություն է տրամադրվում ուսուցիչներին ԱՈՒՊ -ներ մշակելու համար: Որքանո՞վ է Հանրապետական Բազմաճյուղ գնահատման կենտրոնի կողմից իրականացված գնահատումը օգնում ուսուցիչներին մշակել ԱՈՒՊ: Արդյո՞ք այդ ԱՈՒՊ -ները համահունչ են հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների կարիքների հետ: Արդյո՞ք հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների ծնողները տեղեկացված են ԱՈՒՊ -ների մասին, և իրենց կարծիքով արդյոք կրթական պրոցեսը կազմակերպվում է ըստ այդ պլանների: - Արդյո՞ք դպրոցական համայնքի անդամները (ուսուցիչներ, աշակերտներ) ընկալում են ներառական կրթությունը որպես կրթության որակի արժեքային բարձրացում: Որո՞նք են ակնկալվող և անակնկալ արդյունքները (դրական և բացասական), որոնք եղել են ՆԿ ընդունելու արդյունքում: Որո՞նք են հիմնական խնդիրները/ռիսկերը, որոնց բախվում են դպրոցները և ինչպես են դրանք լուծվում: Ի՞նչ են հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաները շահում ներառվածությունից: Ի՞նչ հիմնական փոփոխություններ են (դրական և բացասական) տեղի ունեցել հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների կյանքում ներառական կրթության մեջ ներգրավվելուց հետո: Ի՞նչ ակադեմիական առաջխաղացում ունեն հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաները: Կա՞ն արդյոք դպրոցական տարիքի հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներ,

որոնք ընդգրկված են եղել ներառական դպրոցներում, և որոնք հիմա դուրս են մնացել: Եթե այո, ապա ո՞րն է հիմնական պատճառը: - Որքանո՞վ են հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներն ինտեգրված դպրացական կյանքում: Ընդհանուր առմամբ ինչպե՞ս է ներառականությունն օգնել ինտեգրվելու սոցիալական կյանքում: Որքանո՞վ են աշակերտները հանդուրժող հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների նկատմամբ: 3. Արդյունավետություն և ազդեցություն՝ պատասխանատվության/հաշվետվության և շարունակականության մեխանիզմներ 17 - Մշտադիտարկման/գնահատման ի՞նչ համակարգ է ստեղծվել Հայաստանում ՆԿ առաջընթացը և արդյունավետությունը գնահատելու համար: Որո՞նք են մշտադիտարկման/գնահատման համակարգում սահմանված հիմնական ցուցացիշները և թիրախները: Գնահատման և ստուգման ի՞նչ միջոցներ են գործում մշտադիտարկման/գնահատման համակարգում: Ինչպե՞ս է մշտադիտարկման/գնահատման համակարգը մշակվել և ովքե՞ր են պատասխանատու դրա իրականացման համար: Ի՞նչ հաճախականությամբ է իրականացվում ՆԿ համակարգի մշտադիտարկում/գնահատում: Որքանո՞վ են այդ գնահատումները մասնակցային: - Ինչպե՞ս են մշտադիտարկման/գնահատման արդյունքները փաստագրվում: Ինչպե՞ս, ե՞րբ և ո՞ւմ կողմից են օգտագործվում այդ արդյունքները: Ի՞նչ որոշումներ են կայացվել հիմնվելով մշտադիտարկման/գնահատման արդյունքների վրա: Որքանո՞վ են մշտադիտարկման/գնահատման արդյունքներ հասանելի հասարակության համար: Վերահսկման ի՞նչ մեխանիզմներ են օգտագործվում համոզվելու համար, որ արդյունքները տարածվել են շահառուների միջև: - Որքանո՞վ է ՆԿ ծրագիրը ստեղծել/անմապնդել կարողություններ, գործընթացներ և համակարգեր, որոնք կարող են շարունակական լինել: Ի՞նչ կարողություններ ունի ներառական դպրոցների անձնակազմը ներառական կրթության հետագա իրականացումն իրագործելու համար: - Ներառական կրթության ի՞նչ տարրեր կարող են կիրառվել որպես ընհանուր մոդել բոլոր դպրոցներում: Որքանո՞վ են դպրոցները աջակցում ներառական կրթության մոդելին (օրինակ՝ ինչպե՞ս են ուսուցիչները, ծնողները, աշակերտները խրախուսում և աջակցում հաշմանդամ երեխաների մասնակցությունը դպրոցական միջոցառումներում) և ցանկանում պահպանել ծրագրի ձեռքբերումները: Հետազոտության մեթոդաբանական և մեթոդական

մասեր Հետազոտական մեթոդների և ընտրանքի նկարագրություն Սույն հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրմամբ: Իբրև որակական հետազոտության մեթոդ ընտրվել են խորին հարցազրույցի, առանցքային տեղեկատուների հարցազրույցի /ԱՏՀ/ և ֆոկուս-խմբային հարցազրույցերի մեթոդները: Քանակական հետազոտությունն իրականացվել է կիսաստանդարտացված հարցազրույցի մեթոդի կիրառությամբ: Իբրև ոլորտային զարգացումների իրավիճակի նկարագրում՝ իրականացվել է նաև համապատասխան օրենսդրական փաստաթղթերի և ակտերի, միջազգային հռչակագրերի և պարտավորությունների փաստաթղթերի վերլուծություն: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հետազոտության թիրախային խմբերը, յուրաքանչյուրի կարծիքի ուսումնասիրման մեթոդը և ընտրանքային ծավալները:

Հապավումների ցանկ

ԱՏՀ -Առանցքային տեղեկատուների հարցազրույց

ԱՈԻՊ -Անհատական ուսումնական պլան

ԲՀՄԳ -Բժշկամանկավարժահոգեբանական գնահատում

ՖԽՔ - Ֆոկուս խմբային քննարկում ՆԴ Ներառական դպրոց

ՆԿ - Ներառական կրթություն

ԿԱԻ - Կրթության ազգային ինստիտուտ

ԿԱՊԿՈԻ - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ԿԱՊԿԳ - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում

ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն

Եզրակացություն

Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը։Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված։ Պատճառներն են՝տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը։ Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները։ Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները։ Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են։

Ներառական կրթության համակարգի զարգացում, բոլոր աշակերտների լիարժեք մասնակցություն, հավասար հնարավորությունների ստեղծում և անհատական մոտեցումներ

- Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները։ Միևույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին։ Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք։
- Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն։ Եթե համակողմանի դիտարկենք

աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը։

- Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում։ Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում։
- Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից։ Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար։
- Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ և գիտակից աշխատեն՝ ներառական կրթության նպատակներին հասնելու համար։

Այս բաժնում հիմնականում կանգ եմ առել գնահատման դժվարությունների վրա, քանի որ մեր գործընկերները նշեցին հիմնական բաժինները։ Շատ նուրբ և ծավալուն նյութ էր և ուներ իր ուրույն դժվարությունները։ Հիմնական նպատակներից էր, որ ես բարձրաձայնում էի այն օրենքների, այն իրավունքների, այն ֆինանսական դժվարությունների, այն սոցիալական պայմանների և վերջապես դպրոցում այն ինտեգրման մասին, որը երեխային ոչինչ չի տալիս։ Պարզեցի նաև, որ այն ինչ տեսնում կամ լսում ենք իրականում միայն մի կողմն է։ Շատ կարևորեցի ԱՈՒՊ-ների դերը դպրոցում։ Նրանց կողմից կազմած չափորոշիչներով առաջնորդվելով մենք կհեշտացնենք ուսուցչի գործը և երեխան կստանա իր ուժեղ կողմերին համապատասխան կրթություն։

Կարևորում եմ նաև ներառական կրթությունը Հայաստանում, սակայն պետք է հասարակությունը ևս պատրաստ լինի այս գործընթացին։ Երեխային նայի ոչ թե որպես իրի, որ դպրոց տանեն ու բերեն, այլ իրենց երեխաների նման անհատի։ Երեխան մեղավոր չէ, որ այդպես է ծնվել։ Նա դասարանում իրեն պետք է զգա

չանտեսված, ստանա դասընկերների և ուսուցչի սերը, իսկ հասարակությունը ընդունի նրան այնպիսին ինչպես որ կա:

Ցանկանում եմ անկեղծ ասել, որ այս վերապատրաստումը առիթ հանդիսացավ էլ ավելի խորն ուսումնասիրել ներառական կրթությունը: Հասկանալ դպրոց, սովորող, ծնող, պետություն հարաբերությունները և հիմնականում կարևորել ուսուցչի դերը այս օղակում:

Գրականություն

1. ԱՈԻՊ-ի մշակման մեթոդական ուղեցույց ձեռնարկ հեղ. Սուսաննա Թաղևոսյան
2. ֆիլմ՝ <<Տուն 24>> -հեղ. Նահապետ Սարգսյան - https://www.youtube.com/watch?v=xVGtOWQD4Ts
3. http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/crc.aspx
4. http://www.ncpcr.gov.in/Reports/UNESCO_World_Declaration_on_Education_for_All%201990.pdf 6 http://www.unesco.org/education/pdf/SALAMA_E.PDF,
5. http://inclusion.am/wp-content/uploads/Salamanka.pdf, էջ iv.
6. http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=12949&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html
7. http://unesdoc.unesco.org/images/0014/001402/140224e.pdf, http://unesdoc.unesco.org/images/0018/001868/186807e.pdf,